# ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

**Էմիլ Օրդուխանյան**
*Քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ,*
*ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և*
*իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող*

Քաղաքական մշակույթի տեսությունը մշակվել է 20-րդ դարի երկրորդ կեսին, սակայն դա չի նշանակում, որ նախորդ պատմական, քաղաքական շրջաններում քաղաքական մշակույթ գոյություն չի ունեցել: Ըստ դասական սահմանման՝ քաղաքական մշակույթը պետության, հասարակության մեջ պատմականորեն ձևավորված և հարաբերականորեն կայուն քաղաքական գիտելիքների, գնահատականների, ինչպես նաև քաղաքական հարաբերությունները կարգավորող արժեքների, ավանդույթների և նորմերի ամբողջությունն է[1]: Այս առումով ուշագրավ է տվյալ հարցը դիտարկել Հայաստանի առաջին հանրապետության շրջանակներում, որպեսզի հնարավոր լինի պարզել՝ արդյո՞ք նրա կարճատև գոյության ընթացքում հաջողվել է ձևավորել, գոնե, քաղաքական մշակույթի նախադրյալներ, որոնք կարող են օգտակար լինել այսօր Հայաստանի Հանրապետության արդիականացման համար:

Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանական քաղաքական համակարգի կայացումը անխզելիորեն կապված էր ազգային պետականության ձևավորման և կերտման օրախնդիր հիմնահարցերի հետ[2]:

Խորհրդարանը որպես ներկայացուցչական մարմին, ժողովրդավարության կարևորագույն բաղադրիչներից մեկն է:

---

[1] **Պողոսյան Վ., Միրումյան Կ., Բաբաջանյան Ա., Աստվածատուրով Ս.**, Քաղաքագիտություն հանրագիտական բառարան, Երևան, 2004, էջ 195:

[2] **Քալաշյան Ա.**, Հայաստանի առաջին հանրապետության խորհուրդը և նրա առանձնահատկությունները, էջ 187:

Հաշվի առնենք նաև քաղաքական բազմակարծության սկզբունքը, որը պետք է արտացոլվի խորհրդարանի կազմում՝ որպես տարբեր սոցիալական շերտերի շահերի ներկայացման և իրացման պետական մարմին:

Կարևոր է ընդգծել, որ Հայաստանի առաջին հանրապետությունում ժողովրդավարական արժեքների ներդրման և ինստիտուտների ձևավորման գործընթացը բախվել է ոչ միայն այդ հիմնահարցի շուրջ օբյեկտիվորեն առկա մարտահրավերների, այլև բազմապիսի սոցիալական, տնտեսական, իրավական, ներքին և արտաքին քաղաքական մարտահրավերների, որոնք ամեն կերպ խոչընդոտում էին պետականակերտման գործընթացը:

Հարկ է նկատել, որ պայմանավորված պետության հիմնարկեքի հրատապությամբ՝ Հայաստանի առաջին հանրապետության քաղաքական իշխանության ձևավորումը սկզբնապես հիմնվեց լեգիտիության ոչ ռացիոնալ-իրավական սկզբունքի վրա, այն ավելի շուտ կրում էր ավանդականի տարրեր, սակայն ոչ ամբողջությամբ, քանի որ ավանդականը ենթադրում է իշխանության փոխանցում ժառանգականության սկզբունքում: Հայաստանի առաջին հանրապետության պարագայում լեգիտիմության այս բացառիկ ձևը, որը, ըստ էության, ճանաչվեց, պայմանավորված էր ավելի շուտ պատմական և քաղաքական իրավիճակով՝ ստեղծված առաջին աշխարհամարտի վերջնափուլին, ինչպես նաև ազգային բաղձանքի և շահերի իրացման բացառիկ հնարավորությամբ, որի արդյունք պետք է լիներ Հայաստանի Հանրապետության հռչակումը:

Հատկանշական է, որ Հայոց Ազգային խորհուրդը՝ որպես պետության հիմնարկեքը ազդարարող կառույց, իր կազմում ընդգրկված քաղաքական ուժերի համամասնության եռապատկման, անկուսակցականների և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համալրմամբ ձևավորեց պետության բարձրագույն օրենսդիր մարմինը: Իհարկե, ժողովրդավարության կարևորագույն տարր համարվող ընտրությունները, այս դեպքում տեղի չունեցան: Սակայն եթե

խորամուխ լինենք օրենսդիր մարմնի ձևավորման այս սկզբունքի մեջ, ապա կարող են տեսնել, որ հասարակության ներկայացուցչականության ապահովումը գրեթե լուծվեց, այսինքն՝ եթե ընդհանրական դատենք՝ «ընդգրկվեցին բոլորը», բայց միևնույն ժամանակ հարկ է նշել, որ այսպիսի լայն ընդգրկվածությունը՝ որպես բոլորի շահերի ներառման հնարավորություն, քաղաքագիտության և քաղաքական մշակույթի տեսանկյունից չի ենթադրում տվյալ օրենսդիր մարմնի գործունեության արդյունավետություն: Քանի որ «բոլորի ընդգրկումը» դեռևս չի նշանակում բոլորի միջև քաղաքական կոնսենսուս որոշումների ընդունման գործում: Ավելին՝ այսպիսի իրավիճակը կարող է լայնորեն խոչընդոտել օրենսդիր մարմնի գործունեությանը: Ըստ էության, այս իրավիճակը զուտ քաղաքագիտական ըմբռնումների տեսակետից ստեղծեց «արհեստական լեգիտիմություն»՝ բարդացնելով քաղաքական գործընթացն իր դասական իմաստով: Միևնույն ժամանակ նշենք, որ այս տեսքով այս կառույցի գործունեությունը նախապես սահմանվեց որպես ժամանակավոր՝ առաջիկայում քաղաքական ընտրությունների միջոցով օրենսդիր մարմին ձևավորելու հիմնավորմամբ: Այս տեսանկյունից քաղաքական մշակույթի համատեքստում կարող են պնդել, որ կոնցեպտուալ առումով դրվեցին ժողովրդավարության և մասնակցային մշակույթի ձևավորման նախադրյալները:

Հարկ է նշել, որ երկրի գործադիր մարմինը՝ նախարարների խորհուրդը, ևս ընտրվում էր Խորհրդի կողմից[3]: Սակայն այս ամենի հետ մեկտեղ առաջին հանրապետությունը ձևավորվող պետություն էր, և գործնականում պետական մարմինները դեռևս իրենց գործառույթներն օբյեկտիվորեն չէին կարող լիարժեք իրացնել: Իշխանության ճյուղերի տարանջատումը, պատգամավորներին բնորոշ այլ իրավունքներ և պարտականություններ, վերահսկողական մարմինները, իրավական պետության այլ բաղադրիչներ դեռևս ձևավորման

[3] **Քաջազնունի Հ.**, Հայաստանի Հանրապետութիւն, 1993, էջ 13:

փուլում էին, և հնարավոր չէր այդքան կարճ ժամանակահատվածում պահանջել դրանց լիակատար գործառնություն:

Հանրապետության խորհրդարանում գործում էին չորս խմբակցություն՝ ՀՅԴ՝ որպես մեծամասնություն, ՀԺԿ-ն, սոցիալ-դեմոկրատները (մենշևիկներ և բոլշևիկներ), սոցիալիստ-հեղափոխականները (էսեռներ), որոնք կազմել են ինչպես կոալիցիոն, այնպես էլ ընդդիմության թևը[4]: Սա նշանակում է, որ ձևական տեսանկյունից կար բազմակարծություն, բայց գործնականում այն իր արդյունավետությամբ աչքի չէր ընկնում, քանի որ բացակայում էր կառուցողական քաղաքական խոսույթը: Հետևապես՝ բազմակարծությունը՝ որպես ժողովրդավարական քաղաքական մշակույթի տարր, ապահովված էր զուտ տեսականորեն:

1919թ. շրջանառության մեջ դրվեց ընտրությունների ժողովրդավարական համակարգը, որի հիմքում խորհրդարանի քաղաքական ուժերի և կառավարության փոխհամաձայնությամբ մշակված «Հայաստանի խորհրդարանական ընտրությունների մասին օրինագիծն էր»[5]: Ընտրություններն անցկացվեցին 1919 թ. հունիսի 21-23-ին (ՀՅԴ - 72, Էսեռ - 4, անկուսակցական - 1, թուրք - 2, եզդի - 1)[6]: Չնայած, որ այս անգամ կիրառվեց լեգիտիմության ռացիոնալ-իրավական սկզբունքը, կար ընտրազանգված, սակայն ընտրությունների արդյունքում այլ ժողովրդավարական խնդիր առաջացավ, այն է՝ մեծամասնության կողքին չկար փոքրամասնություն՝ որպես իրական ընդդիմություն, ինչն արդեն իսկ տեսականորեն և գործնականում ևս խաթարում էր խորհրդարանում բազմակարծության առկայությունը, և բոլոր

---

[4] **Քալաշյան Ա.**, Հայաստանի առաջին հանրապետության խորհուրդը և նրա առանձնահատկությունները, էջ 191:

[5] Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), Երևան, 2000, էջ 95-96:

[6] **Քալաշյան Ա.**, Հայաստանի առաջին հանրապետության լեգիտիմ խորհրդարանը և նրա առանձնահատկությունները, էջ 212, http://kantegh.asj-oa.am/677/1/210-221.pdf (28.03.2018).

գործողությունների համար պատասխանատվությունը հետայսու մնում էր քաղաքական մեծամասնություն հանդիսացող ՀՅԴ-ի վրա: ՀՅԴ բյուրոյի դե ֆակտո իշխանությունը մեծանում էր: Եվ դրա արդյունքում՝ Քաջազնունին քաղաքական համակարգը համեմատում է բոլշևիկյան համակարգի հետ՝ հավելելով, որ «բոլշևիկները դա անում էին հետևողականորն և բացահայտ, իսկ մենք աշխատում էինք քողարկել դեմոկրատական ձևերի տակ»[7]:

Այս հանգամանքը թույլ է տալիս եզրակացնել, որ ռացիոնալ-իրավական լեգիտիմության պայմաններում ևս խորհրդարանի գործունեությունը ժողովրդավարության առումով ուներ խոցելի տեղեր, ինչը դժվարացնում էր մասնակցային քաղաքական մշակույթի դե ֆակտո ձևավորումը՝ շեշտադրելով հպատակային քաղաքական մշակույթի տարրերը: Սակայն չի կարելի անտեսել այն փաստը, որ այդ ժամանակաշրջանում հայկական պետությունը շարունակաբար դիմակայում էր ոչ միայն ներքին, այլև արտաքին անվտանգության մարտահրավերներին:

Նկատենք, որ անկայուն էր նաև գործադիր մարմինը՝ կառավարությունը, իր վարչապետներով: Առաջին հանրապետության գոյության կարճ ժամանակահատվածում Հայաստանում փոփոխվեց չորս վարչապետ՝ Հ. Քաջազնունի, Ա. Խատիսյան, Հ. Օհանջանյան, Ս. Վրացյան: Անկայունությունը գործադիր մարմնում հանգեցնում էր գործնական անարդյունավետ քաղաքականության: Սա հետևանքն էր չկայացած կուսակցական համակարգի և հիմնականում կոնսենսուսի չհանգող խորհրդարանական ուժերի: Խորհրդի ուժերը, մինչև 1919 թ. հունիսյան ընտրությունները չլինելով ընտրված, օբյեկտիվորեն չէին ունեցել ընտրազանգված, հետևապես՝ ազատ լինելով ընտրազանգվածի համար ներկայացուցչական գործառույթ իրականացնելուց՝ դրանք մեծապես առաջ էին մղում խմբային շահեր, ինչը վերացնում էր իշխանության և ժողովրդի միջև երկխոսության հնարավորությունը: Այս հանգամանքը քաղաքական մշակույթում

---

[7] **Քաջազնունի Հ.**, Հ.Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս, Երևան, 1990, էջ 30:

և, առհասարական, պետության կառավարման գործում մեծագույն բացթողումներից էր: Սակայն այս իրավիճակը չշտկվեց նաև օրենսդիր մարմնի ընտրություններից հետո, քանի որ մեկ քաղաքական ուժի ստացած բացարձակ մեծամասնությունը արդեն նույնիսկ գործնականում սպառեց այլ քաղաքական ուժերի հետ երկխոսության և դրա արդյունքում կոնսենսուսի հանգելու հնարավորությունը:

Թերևս պետության ներքին կազմակերպման տեսանկյունից որպես առաջին հանրապետության պետականակերտման ձախողման պատճառներից մեկը կարելի է տեսնել Ն. Մաքիավելիի այն գաղափարի մեջ, որի համաձայն՝ նոր պետականության հաստատումը պետք է անցնի երկու փուլ՝ 1. միանձնյա իշխանության հաստատում՝ մասնատված և երկպառակտված ու օտար զավթիչների կողմից ջլատված Իտալիայի միավորման, վերանորոգման և բարձրացման նպատակով (նմանօրինակ խնդիր ծառացած էր նաև Հայաստանի առաջին հանրապետության առջև), 2. չափավոր հանրապետության հաստատում: Բարեփոխված հասարակության, նոր կարգի պահպանումը պետք է վստահել մեծամասնությանը՝ ժողովրդի կառավարմանը[8]: Իհարկե, Մաքիավելիի գաղափարն այլ պետության և պատմական շրջանի համար էր ասված, սակայն գլխավոր խնդիրը՝ պետության հաստատումը, երկու դեպքում էլ նույնն էր: Եվ ուժեղ բռունցքի առկայությունը, գուցե, կարողանար կասեցնել քաղաքականության մեջ ներգրավված այդքան ակտորների միջև պետականակերտման վերաբերյալ տարբեր տեսլականները, երբ չկայացած կուսակցական համակարգը և բազմակարծությունը որոշակիորեն նպաստեցին պետական անկախության կորստին՝ ունենալով նաև արտաքին լուրջ սպառնալիք անվտանգության առումով: Հարկ է հիշել, որ առաջին հանրապետության կարճատև գոյության շրջանում պետության դե ֆակտո տարածքը մի քանի

---

[8]**Պողոսյան Վ., Միրումյան Կ., Բաբաջանյան Ա., Աստվածատուրով Ս.**, Քաղաքագիտություն հանրագիտական բառարան, Երևան, 2004, էջ 263:

անգամ ավելացավ, սակայն վերջում տարածքային կորուստներն անասելի ցավոտ եղան:

Հետագայում քաղաքագիտությունը հիմնավորեց այն թեզը, որ խորհրդարանական համակարգերը կարող են արդյունավետ գործել, եթե կայացած է կուսակցական համակարգը, իսկ Հայաստանի առաջին հանրապետության դեպքում 2 տարին օբյեկտիվորեն բավարար չէին կուսակցական համակարգի ձևավորման և կայացման համար: Այսինքն՝ առաջին հանրապետության շրջանում լիարժեք «քաղաքական մշակույթ» որպես հասկացության քաղաքագիտական ընկալում, չձևավորվեց, սակայն անկասկած է, որ մշակվեցին, մասամբ նաև ներդրվեցին ժողովրդավարական քաղաքական մշակույթի որոշ տարրեր: Ի դեպ՝ հարկ է նշել, որ այդ պատմական ժամանակաշրջանում աշխարհում լիարժեք կայացած ժողովրդավարություններ չկային. ժողովրդավարացման առաջին ալիքը ավարտվեց միայն 1926 թ.-ին: Սակայն այլ պետությունների պետականության անընդհատությունը նրանց հնարավորություն տվեց ձևավորել և ամրապնդել այդ ավանդույթը, ինչը, ցավո՛ք, բոլշևիկյան և թուրքական ներխուժման արդյունքում ընդհատվեց Հայաստանի առաջին հանրապետությունում: Այս ամենը վկայում է այն մասին, որ հայ հասարակությունը իր քաղաքական ավանդույթի մեջ ունեցել է ժողովրդավարական արժեհամակարգ, առաջին հանրապետության կարճատև գոյության ընթացքում փորձեր են արվել ստեղծել մասնակցային քաղաքական մշակույթ, և այս ամենը հետևողականորեն ոչնչացվեցվել է խորհրդային բռնապետության տարիներին՝ փոխարինվելով կոմունիստական միակուսակցական գաղափարախոսությամբ և բոլշևիկյան բիրտ քաղաքականությամբ: Սակայն Հայաստանի երրորդ հանրապետության հռչակումը և արցախյան ազատագրական պայքարը ցույց տվեցին, որ հայի քաղաքական գիտակցության մեջ դեռևս պահպանվել են առաջին հանրապետության շրջանում «մասնակցային քաղաքական մշակույթի որոշ տարրեր»: Ի դեպ՝ այս առումով արևմտյան հետազոտող Ինգլհարթը նշում է, որ ժողովրդավարության ձգտող հասարակությունները, եթե չունեն

դրա պատմական ավանդույթը, հիմնականում ձախողում են այդ գործընթացը: Նույնիսկ ժողովրդավարական արժեքների ուսուցանումը հաճախ չի տալիս սպասված արդյունքը[9]: Կարևորն այդ ավանդույթն ունենալն է: Մեր պարագայում այս թեզի ճշմարտացիությունը կարելի է ընդունել վերապահումով, քանի որ ինչպես առաջին հանրապետության շրջանում, այնպես էլ այսօր հայկական պետությունը կանգնած է լուրջ ներքին և արտաքին մարտահրավերների առջև, որոնք նաև որոշակիորեն խոչընդոտում են ժողովրդավարացման գործընթացը: Սակայն հարկ է նշել, որ մեր հասարակության մեջ այդ ներուժը պահպանվել է, ինչն իրացվեց համապատասխան քաղաքական շահի և կամքի դրսևորման արդյունքում: 2018թ. ապրիլ-մայիս ամիսներին ժողովրդական շարժումը, որը պայմանականորեն անվանվեց «թավշյա հեղափոխություն», ցույց տվեց, որ հայ ժողովուրդն ունի ժողովրդավարական ավանդույթ և կամք հաղթահարել, թեկուզ, ռևոլյուցիոն ճանապարհով այն խնդիրները, որոնք տասնամյակներ շարունակ չէր հաջողվում հաղթահարել էվոլյուցիոն ճանապարհով: Իսկ այս գործընթացը մասնակցային քաղաքական մշակույթի օրինակ էր:

Այսպիսով՝ Հայաստանի առաջին հանրապետության շրջանում ժողովրդավարական պետության կերտման բազմաթիվ փորձեր ձեռնարկվեցին, ինչը տվյալ ժամանակաշրջանում միջազգային մակարդակով կարելի է դիտել որպես բավական առաջադեմ նպատակ: Սակայն բազմաթիվ ներքին մարտահրավերներ և արտաքին սպառնալիքներ արգելակեցին և կասեցրեցին հայկական հանրապետության ընթացքը՝ դառնալով նրա անկման հիմնապատճառ: Իր գոյության կարճ ժամանակաշրջանում, թերևս, հայկական պետությունը կարողացավ ցույց տալ իր առաջադեմ, ժողովրդավարական ձգտումը դեպի քաղաքակիրթ աշխարհ, ինչը վկայում է մեր

---

[9] **Инглхарт Р.,** Культура и демократия, в книге "Культура имеет значение. Каким образом ценности способствуют общественному прогрессу", под ред. Л. Харрисона и С. Хантингтона. М., Московская школа политических исследований, 2002, с. 106-107.

հասարակության մեջ առկա ժողովրդավարական ավանդույթի և մասնակցային քաղաքական մշակույթի նախադրյալների մասին, ինչը հետևողական, նպատակային և պետական համապատասխան քաղաքական շահի և կամքի դրսևորման դեպքում կարող է տալ իր պտուղները նույնիսկ այսօր: 2018 թ. ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանում տեղի ունեցած «թավշյա հեղափոխությունը»՝ որպես մասնակցային քաղաքական մշակույթի դրսևորում, իրական հնարավորություն ստեղծեց բացահայտելու հայ հասարակության ժողովրդավարական ներուժը:

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

**Էմիլ Օրդուխանյան**
*Քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ,*
*ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և*
*իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող*

### ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ուսումնասիրվում են Հայաստանի առաջին Հանրապետությունում քաղաքական մշակույթի ձևավորման նախադրյալները: Առաջին հանրապետությունում ձեռնարկվել են ժողովրդավարական կառավարման կարգի հաստատման բազմաթիվ փորձեր, ինչը տվյալ պատմական շրջանի համար կարելի է համարել որպես առաջադեմ խնդիր միջազգային մակարդակում: Սակայն, բազմաթիվ ներքին մարտահրավերներ և արտաքին սպառնալիքներ խոչընդոտել և կասեցրել են հայկական պետության առաջընթացը՝ դառնալով դրա անկման պատճառ: Իր կարճատև գոյության ընթացքում հայկական պետությանը

հաջողվեց ցույց տալ իր առաջադեմ, ժողովրդավարական ձգտումը դեպի քաղաքակիրթ աշխարհ, ինչը վկայում է հայ հասարակության մեջ ժողովրդավարական ավանդույթների և մասնակցային քաղաքական մշակույթի նախադրյալների առկայության մասին:

Հոդվածում եզրակացություն է արվում այն մասին, որ ազգային շահերի հետևողական, նպատակաուղղված ներկայացումն ու ագրեգացիան կարող են վերհանել առաջին հանրապետության ժողովրդավարական ավանդույթները նաև այսօր: 2018 թ. ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանում տեղի ունեցած «թավշյա հեղափոխությունը»՝ որպես մասնակցային քաղաքական մշակույթի դրսևորում, իրական հնարավորություն ստեղծեց բացահայտելու հայ հասարակության ժողովրդավարական ներուժը:

**Բանալի բառեր՝** Հայաստանի Հանրապետություն, խորհրդարական, ժողովրդավարություն, մասնակցային քաղաքական մշակույթ:

## ПРЕДПОСЫЛКИ ФОРМИРОВАНИЯ ПОЛИТИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ В ПЕРВОЙ АРМЯНСКОЙ РЕСПУБЛИКЕ

**Эмиль Ордуханян**
*Кандидат политических наук, доцент,*
*старший научный сотрудник Института*
*философии, социологии и права НАН РА*

### РЕЗЮМЕ

В статье исследуются предпосылки формирования политической культуры в Первой армянской республике. В Первой Республике Армения были предприняты многочисленные попытки построить демократическое правление, которое можно считать прогрессивной задачей на международном уровне за данный

исторический период. Однако многие внутренние вызовы и внешние угрозы затрудняли и остановили прогресс Армянской Республики, став причиной ее распада. За короткий период своего существования армянскому государству удалось продемонстрировать свое прогрессивное, демократическое стремление к цивилизованному миру, что свидетельствует о наличии предпосылок демократических традиций и политической культуры участия в нашем обществе.

В статье делается вывод о том, что последовательная, целенаправленная демонстрация и агрегация национальных интересов могут выявить демократические традиций первого армянского государства и сегодня. “Бархатная революция” в апреле-мае 2018 года стала прекрасной возможностью продемонстрировать демократический потенциал армянского общества как случай партиципативной политической культуры.

**Ключевые слова:** Республика Армения, парламент, демократия, политическая культура участия.

## PRECONDITIONS FOR THE FORMATION OF POLITICAL CULTURE IN THE FIRST ARMENIAN REPUBLIC

**Emil Ordukhanyan**
*Candidate of Political Science, Associate Professor,*
*Senior Researcher of the Institute of Philosophy,*
*Sociology and Law of NAS RA*

### SUMMARY

The article explores the issue of preconditions for the formation of political culture in the First Armenian Republic. Numerous attempts were made in the First Republic of Armenia to build a democratic rule, which can be considered as a progressive objective at international level for that period of history. However, many internal challenges and external threats hampered and stopped the progress of the Armenian

Republic, becoming the reason for its decline. In a short period of its existence, the Armenian state managed to demonstrate its progressive, democratic aspiration towards a civilized world, which proves the presence of preconditions for democratic tradition and participatory political culture in our society.

The article concludes that a consistent, purposeful demonstration and aggregation of national interests can reveal the democratic traditions of the first Armenian Republic even today. The "Velvet Revolution" in April-May, 2018 was an excellent opportunity to demonstrate the democratic potential of the Armenian society as a case of participant political culture.

**Key words:** Republic of Armenia, parliament, democracy, participant political culture.

*Լույս է տեսել՝ <<Փիլիսոփայությունը արդի աշխարհում, գիրք VIII>> ժողովածուում, Երևան, 2018, էջ 313-323:*